

Ամերիկայից ներդրումների ներգրավման հիմնական խնդիրները

Ջերմորեն ողջունում եմ բոլոր մասնակիցներին,

Ես ներկայացնում եմ Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատը, որը համախմբում է Հայաստանում մոտ 100-ից ավելի բիզնեսներ, ովքեր ունեն ինչ որ մի ամերիկյան տարր իրենց մեջ, կամ գլխավոր բաժին ունեցողն է Ամերիկյան ...

Հարգելի՛ գործընկերներ,

Հայաստանում Ամերիկյան առևտրի պալատն այսօրվա դրությամբ ունի 115 անդամ, սկսել է 2000 թվականի 10 հիմնադիր անդամներից: Այսինքն՝ 17 տարվա մեջ 10 թիվը դառել է 115: Դա շատ է թե քիչ, ես ձեր դատողության եմ թողնում, իսկ իմ կարծիքով կարող էր թիվն ավելի շատ լիներ: Դա վկայում է մեր տնտեսության՝ իմ կարծիքով ոչ արագ զարգացման մասին, ուրույն, բայց դանդաղ: Դա վկայում է այն մասին, որ վստահությունը դեպի Հայաստանի տնտեսությունն շատ եկար ժամանակ է պահանջում, մինչև որ ներդրողները հրապուրվեն:

2000 թվականից առայսօր 10 կազմակերպությունից 115-ի հասնելը մեր կազմակերպության շնորհիքն է այն առումով, որ ամենամեծ գործարար ասոցիացիաներից մեկն ենք, սակայն ներդրողների թիվը Հայաստանի տնտեսության մեջ այդքան էլ արագ չի զարգանաում: Ցավոք, որպես հասարակական կազմակերպություն Ամերիկայի առևտրի պալատը տարբեր ջանքեր է գործադրում: Հիմնականում իր առաքելությունը միակն է. ամրապնդել հայ-ամերիկյան տնտեսական բիզնես կապերը և փորձել մեր կազմակերպությանն անդամակցող ներդրողների շահերը պահպանել մեր երկրի տնտեսական դաշտում: Մեր հիմնական գերնպատակն, որ եթե անդամներից մեկն ունի որևէ խնդիր իր բիզնեսի մեջ, ունի որևէ ներդրումային հարց կամ առջարկ, մենք օգնում ենք, որպեսզի այդ հարցը կառավարության օրակարգում և այլ աստիճաններում ունենան իրենց ուրույն տեղը: Մեր նման կազմակերպության դերը շատ կարևոր է այդ խնդրի մեջ:

2-րդ-ը, որ ես իրականացնում եմ Ամերիկյան ամենախոշոր ներդրողի ներկայացուցիչն եմ Հայաստանում: «Կոնտուր» ամերիկյան կազմակերպությունը խոշոր ներդրում է կատարել Հայաստանի էներգետիկ դաշտում: Մեր փորձից ելնելով արտասահմանյան ներդրողը, երբ որ մտնում է Հայաստանի շուկա, նա կարիք ունի խորհրդատվության, կարիք ունի երկարամյա և առօրյա բավականին ծանր աշխատանքի, այն առումով, որ պետք է իրեն ուղղորդել: Ցանկացած ներդրող, որ մուտք է գործում հայաստանյան շուկա, իրեն պետք է տրամադրել խորհրդատվություն: Մեր փորձից ելնելով՝ դա բավականին ծանր գործ է: «Կոնտուր»-ի բանակցությունները ներդրման հետ կապված տևեցին մոտ 4-4,5 տարի, այսինքն՝ եթե Հայաստանում մենք ուզում ենք ներդրողներ բերենլ արտերկրից, և ամեն մեկը եթե 3-4 տարի կորցնի միայն

բանակցությունների վրա, իմ կարծիքով դա այդքան էլ արդյունավետ չէ: Բհարկե լավ է, որ վերջում ստացվում է, լավ է, որ վերջում դրական արդյունք է լինում, և այսօր մենք որպես ընկերություն բավականին դրական ենք համարում մեր ներդրումը Հայաստանում, բայց, այնուամենայնիվ, այն ժամանակային և մարդկային ռեսուրսը, որ մենք ներդրեցինք չորս ու կես տարում, կարող էր շատ ավելի արդյունավետ լիներ այլ պայմաններում:

Հայաստանում Ամերիկյան առևտրային պալատն ունի մի քանի առավելություններ: Մենք բավականին սերտ գործընկերություն ունենք և Հայաստանի կառավարության և Միացյալ Նահանգների քաղաքական և տնտեսական ներկայացուցչերի հետ՝ ի դեմս դեսպանների, դեսպանատան և իր թիմի հետ, որը մեզ թույլ է տալիս ցանկացած հարց բարձարցնել օրակարգում: Եթե դահիլճում կան հետաքրքրվող ներդրողներ և կամ մարդիկ, ովքեր ուզում են ավելի մոտիկից ծանոթալանալ Հայաստանի բիզնես միջավայրին, մենք պատրաստ ենք ժամանակ հատկացնել և առանձին հանդիպել, զրուցել և ներկայացնել, թե ի՞նչ հնարվարություններ կան և ինչո՞վ մենք կարող ենք աջակցել:

Եթե խոսենք պալատի այսօրվա 3 հիմնական նապատակների մասին, առաջիկա 1-2 տարվա համար մեր օրակարգում կա 3 խնդիր:

Ցանկացած ներդրող, երբ մտնում է Հայաստան առաջին հարցերից մեկը մտավոր սեփականության հարցումն է: Այդ օրենքները մեր ոլորտում կան, բայց ցավոք դրանք դեռ իդեալական չեն, գործնականում շատ վատ են կիրառվում: Այստեղ անելիքներ կան:

2-ը այլընտրանքային դատական վեճերի լուծումն է, այդ դաշտում մենք պատրաստվում են մեր պալատի ներքո ստեղծել արբիտրաժային դատարան, որը մենք հուսով ենք կկարողանա աջակցել բիզնես ներդրողներին և միջավայրին:

3-րդ մեր նպատակն է բիզնես միջավայրի մշակույթի ներդրումը: Այդ բիզնես մշակույթը բերում են իրենց հետ ներդրողները, օրինակ՝ կորպորատիվ սոցիալ պատասխանատվությունը թերզարգացած է մեր բիզնես միջավայրում և պալատն այդ առումով աշխատանք է կատարում, որպեսզի պալատի իր անդամների միջոցով տարածի դրա դրական կողմերը:

Ինչու ոչ նաև մենք Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության գաղափարակիցն ենք:

Ես մեկ անգամ ողջունում եմ բոլորին և պալատի անունից:

Արա Հովսեփյան

Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատի նախագահ